# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N 203 - Ա** **25 մարտի 2022 թ.**

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 12-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի մարտի 23-ի 04/03.14/8575-2022 հանձնարարականը

**որոշում եմ՝**

1. Կառավարության կողմից գյուղատնտեսության ոլորտում 2022 թվականին իրականացվող պետական աջակցության ծրագրերը Գեղարքունիքի մարզի բնակչությանն իրազեկելու, դրանց իրագործման ձևերը և հնարավորությունները տեղերում ներկայացնելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝ ամենօրյա աշխատանքային ռեժիմով այցելել Գեղարքունիքի մարզի համայնքներ, հանդիպումներ ունենալ ազգաբնակչության հետ և որոշման 1-ին կետով նշված աշխատանքների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել Էկոնոմիկայի նախարարություն:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2022 թվականի մարտի 25-ի
N 203 - Հ որոշման

Կ Ա Զ Մ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ

| | |
|---|---|
| Սարգսյան Կարեն | - Գեղարքունիքի մարզպետ, աշխատանքային խմբի ղեկավար |
| Պետրոսյան Մարտին | - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ |
| Ջրաղացպանյան Անդրանիկ | - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետի պարտականությունները կատարող |
| Բադեյան Ռաֆիկ | - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ |
| Մարգարյան Գայանե | - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ |
| Շաhբազյան Կարինե | - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի ավագ մասնագետ |

25.03.2022

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ս. ԽԼՂԱԹՅԱՆ